Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված «Կայուն կրթության ոլորտի քաղաքականությունների ռազմավարական պլանավորում» սեմինարի շրջանակներում Մոլդովայի Հանրապետություն (ք. Քիշնև) գործուղման արդյունքների վերաբերյալ

**Գործուղվողներ՝**

1. Վերոնիկա Խորասանյան, ԿԳՄՄՆ Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության ռազմավարական պլանավորման բաժնի պետ.
2. Թամարա Գյոզալյան, ԿԳՄՄՆ Ֆինանսաբյուջետային վարչության ընթացիկ ծրագրերի բյուջետավորման և ֆինանսավորման բաժնի պետ.
3. Սիրանուշ Մելոյան, ԿԳՄՄՆ Մասնագիտական կրթության և ուսուցման վարչության մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի պետ.
4. Եկատերինա Կաշինա, ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ուսանողների աջակցության բաժնի պետ.
5. Ալինա Հակոբյան, ԿԳՄՄՆ Հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական կրթական քաղաքականության մշակման և վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետ:

**Գործուղման վայրը և ժամկետը՝**
Մոլդովայի Հանրապետություն, ք. Քիշնև, 2026 թվականի մայիսի 5-8

**Հրավիրող կողմը՝**
Եվրոպական կրթական հիմնադրամ

**Գործուղման նպատակը՝** մասնակցել Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված՝ «Կայուն կրթության ոլորտի քաղաքականությունների ռազմավարական պլանավորում» սեմինարին, որի նպատակն է ուժեղացնել մասնակիցների վերլուծական և գործնական կարողությունները՝ կրթության ոլորտում ռազմավարությունների մշակման, իրականացման և գնահատման հարցերում:

**Քննարկման թեմաները՝**
Համադրելով հայեցակարգային ըմբռնումը գործնական կիրառման հետ՝ սեմինարը կենտրոնացել է ռազմավարական շրջանակների կառուցման, դեռևս 2026թ. հունվարին Երևանում անցկացված առաջին սեմինարի ընթացքում ձեռք բերված ուսումնառության արդյունքների ամրապնդման, ինչպես նաև

ռազմավարությունների գնահատման, դրանց իրականացման ծախսերի հաշվարկման և պլանավորման վրա: Այս շրջանակում քննարկման հիմնական թեմաներն էին՝

- Գոյություն ունեցող ռազմավարությունների կառուցվածքի և համահունչության վերլուծությունը,
- Ռազմավարությունների արդյունքների չափելիության և ապացույցների կառուցվածքների գնահատումը,
- Ռազմավարությունների ֆինանսական և իրականացման հնարավորության գնահատումը,
- Ռազմավարությունների համապատասխանեցման, համեմատական վերլուծության և ռիսկերի գնահատման իրականացումը:

**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**
Սեմինարը միտված էր ապացուցահեն որոշումների կայացմանը, մոնիթորինգին, ֆինանսական պլանավորման և ռիսկերի գնահատման հմտությունների ամրապնդմանը:
Այն հնարավորություն է տվել ամրապնդելու տարեսկզբին Հայաստանում կայացած «Կրթական քաղաքականությունների մեջ ապացույցների ռազմավարական կիրառումը» թեմայով առաջին աշխատաժողովի ընթացքում ձեռք բերված ուսումնական արդյունքները: Բացի այդ՝ սեմինարի մեկնարկին ներկայացվել և ամփոփվել են հունվարյան աշխատաժողովի շրջականում ստացված գործնական առաջադրանքի արդյունքները, որը վերաբերել է Հանրակրթության պետական չափորոշչի վերանայմանը և արդյունքային շրջանակի մշակմանը:

Սեմինարը կրել է գործնական բնույթ, անցկացվել է ինտերակտիվ ձևաչափով՝ բազմաթիվ գործնական և թիմային աշխատանքների կատարմամբ՝ հնարավորություն ընձեռելով սեմինարի մասնակից 4 երկրների պատվիրակներին՝ ներկայացնելու սեփական երկրի փորձը, համատեղ քննարկելու գործող ռազմավարական փաստաթղթերի կենսունակությունը և իրագործելիությունը:

Մասնակիցները հնարավորություն են ունեցել ամրապնդելու իրենց կարողությունները՝ վերլուծելու գոյություն ունեցող ռազմավարությունները՝ ուսումնասիրելով խնդիրները, բացահայտելով հիմնական պատճառները և գնահատելով ռազմավարական նպատակների համապատասխանեցումը առկա մարտահրավերներին:

Սեմինարի ընթացքում գործնական պարապմունքների միջոցով քննարկվել և իրականացվել են խնդիրների ծառի և փոփոխությունների տեսության, ինչպես նաև՝ արդյունքային շրջանակի ու ցուցանիշների մշակում և վերլուծություն, որը հնարավորություն է տվել մասնակիցներին զարգացնելու և ամրապնդելու իրենց

կարողություններն ու հմտությունները քաղաքականությունների, ռազմավարական տարատեսակ փաստաթղթերի համապարփակ և իրատեսական մշակման գործում:

Գործնական վարժություններին հետևել են վերլուծված փաստաթղթերի վերանայման, արդիականության և արդյունավետության շուրջ ապացույցների վրա հիմնված առաջարկությունների թիմային ներկայացումը և համատեղ քննարկումը:

Մասնակիցները յուրացրել են այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս քննելու ռազմավարությունների համահունչությունն ավելի լայն քաղաքականության շրջանակներում, դրանք համեմատելու համապատասխան չափորոշիչների կամ փորձի հետ, ինչպես նաև բացահայտելու հիմնական ռիսկերը, որոնք կարող են ազդել դրանց իրականացման վրա:

**Ստորագրություն, ամսաթիվ՝**

Վերոնիկա Խորասանյան

Թամարա Գյոզալյան

Սիրանուշ Մելոյան

Եկատերինա Կաշինա

Ալինա Հակոբյան

**13.05.2026 թ.**